

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.
ՄԻՐԱԿԱՆՅԱՆԻ 2011Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

23-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2012Թ.

Քննարկվել է համայնքի ընդհանուր ժողովում, մասնակցությամբ համայնքի 456 անդամների, ավագանու անդամների և Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության վարչության պետ պարոն Վ. Հովհաննիսյանի:

Հաշվետու ժամանակահատվածում ճիշտ գնահատվել է համայնքի իրավիճակը, առավել ուշադրություն է դարձվել սոցիալ-տնտեսական խնդիրների, բյուջեի սեփական եկամուտների մուտքերի, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներին:

Համայնքի բյուջեն կազմելիս, որպես համայնքի զարգացման հիմք, լուրջ ուշադրություն է դարձվել եկամտային մուտքերի /գույքահարկի, հողի հարկի, հողի վարձավճարների, տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքներին:

Ընդամենը նախատեսվել է եկամուտներ 44236000 դրամ և մուտքագրվել է 43450300 դրամ և բյուջեն կատարվել է 98.2%-ով: Սեփական եկամուտները կատարվել են 101 տոկոսով:

Բյուջեի ծախսային մասը հիմնականում ուղղվել է հետևյալ աշխատանքներին՝

Խմելու և ոռոգման ջրագծերի հիմնական /կապիտալ/ վերանորոգում 4400000 դրամ, աղբահանության և սանմաքրման աշխատանքներ 980000 դրամ, գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում 1250000 դրամ, պետական աջակցությամբ ձեռք է բերվել տրակտոր 4000000 դրամ արժողությամբ, և գութան 550000 դրամ արժողությամբ, 2000000 դրամ հատկացվել է համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի համար, 600000 դրամ ներդրվել է նախադպրոցական հիմնարկին, համայնքի աղքատ ընտանիքներին տրվել է դրամական օգնություն 1600000 դրամ և այլն:

Վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագրով վերանորոգվել է համայնքի Ձորագյուղ-Վարդաձոր ջրատարի 4 կմ հատվածը և ոռոգման սեզոնին ջրամատակարարման աշխատանքները նորմալ հունով են ընթացել:

2011թ. ընթացքում համայնքի անդամներին շուկայականից ցածր գներով տրամադրվել է 15 տոննա ազոտական պարարտանյութ և մոտ 6 տոննա աշնանացան ցորենի որակյալ սերմացու:

Խմելու ջուրը մատակարարվում է համայնքի կողմից 24 ժամվա ռեժիմով, սակայն ջրագծերը հին են, ունեն 40 տարվա կառուցման վաղեմություն և վթարները հաճախակի բնույթ են կրում, ուստի լուրջ ներդրման կարիք է զգացվում:

Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է համայնքի ավագանու 10 նիստ, որոնց ընթացքում ընդունվել է 28 որոշումներ, ապահովել է որոշումների հրապարակայնությունը և մասսայականությունը: Ընդունված որոշումները նպատակաուղղվել են հիմնականում համայնքի ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման, համայնքի առջև ծառայած խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

Սակայն կան հրատապ հարցեր, որոնք կնպաստեն համայնքի զարգացմանը:

Հրատապ խնդիր է համայնքի դպրոցի վերանորոգման աշխատանքների արագացումը, որի ֆինանսավորման համար զգալի աշխատանքներ է տարվել կառավարության հետ:

3000-ից ավել բնակչություն ունեցող գյուղը չունի մանկապարտեզ, որի համար հարց է բարձրացվել կառավարության առջև այս ուղղությամբ ֆինանսավորելու մասին:

Համայնքի բուժամբուլատորիան տեղակայված է մի կերպ հարմարեցված դպրոցի ուսուցչի տանը և պայմանները անբավարար են, որի հարցը արդեն լուծված է և 2012 թվականին կկառուցվի ամբուլատորիայի նոր շենք: Այդ ուղղությամբ համայնքը պետք է կատարի 3050000 դրամի ներդրում:

Համայնքի կենտրոնական ճանապարհը ասֆալտապատվել է մինչև գյուղամեջ, մնացած մասի /մինչև Ձորագյուղ համայնք/ ասֆալտապատման համար անհրաժեշտ է ներդրման հնարավորություն գտնել, այս ուղղությամբ համայնքի ղեկավարությունը դիմել է կառավարությանը և խոստացել են հնարավորության դեպքում աջակցել:

Համայնքի ղեկավարը պատասխանեց հարցերին: Ելույթներ ունեցան համայնքի մի շարք անդամներ և կատարված աշխատանքները գնահատվեցին դրական: Գեղարքունիքի մարզպետարանի

գյուղատնտեսության վարչության պետ պարոն Վ. Հովհաննիսյանը իր խոսքում նույնպես նշեց համայնքի ղեկավարության դրական աշխատանքների մասին և խոստացավ աջակցել համայնքին բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ:

Վարդաձոր համայնքի ընդհանուր ժողովը որոշեց՝ համայնքի ղեկավար 2011թ. կատարած աշխատանքներին տալ դրական գնահատական:

Վարդաձոր համայնքի ղեկավար՝

Ռ. Սիրականյան